

ԾՐԱԳԻՐ -- ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԱՐՃԱՆԹԻՆԱԲՆԱԿ ԱՅՆԹԱՊՅԻՆԵՐՈՒ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ


ՀԻՄՆՈՒԱԾ 1929 ին

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ



ՏՊԱՐԱՆ «ՄԱՍԻՍ» Ա. ԵՐԿԱՆԵԱՆ

ՔԱՆԻՆԿ 1329 Պ. ԱՅՐԷՍ




ԵՐԱԳԻՐ -- ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԱՐԺԱՆԹԻՆԱԲՆԱԿ ԱՅՆԹԱՊՑԻՆԵՐՈՒ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ


ՀիՄՆՈՒԱԾ 1929 ԻՆ
ԳՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ



ՏՊԱՐԱՆ „ՄԱՍԻՍ“ Ա. ԵՐԿԱՆԵԱՆ

ՔԱՆԻՆԿ 1929 Պ. ԱՅՐԷՍ





ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՐԺԱՆԹԻՆԱԲՆԱԿ ԱՅՆԹԱՊԹԻՆԵՐՈՒ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Հիմնուած 1929 - թն

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆՈՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

316
ՅՕԳ. 1 - Միութեանս անունն է ԱՐԺԱՆԹԻ-
ՆԱԲՆԱԿ ԱՅՆԹԱՊԹԻՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱ-
ԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ:

ՅՕԳ. 2 - Միութեանս նպատակն է այնթապցի
հայերու մէջ՝

ա. Մշակել փոխադարձ համակրութիւն ու յար-
գանք, եւ կապ հանդիսանալ բոլոր Այնթապցիներ-
բուն մէջ:

բ. Վառ պահել անոնց ազգասիրական եւ հայրե-
նասիրական զգացումները: Հոգ տանել հայ նկարա-
զրի անադարս պահպանման եւ կատարելագործման
Բարձրացնել անոնց մասսօրական, հոգեկան ու բա-
րոյական մակարդակը:

գ. Օգնել այնթապցի տարազիր հայերու զաւակ-
ներու կրթութեան. որբերու պահպանման եւ դաս-
տիարակութեան. ինչպէս նաեւ՝ մեր քաղաքացիներ-
ու գաղթականական վիճակին բարւոքման:

ԳԼՈՒԽ Բ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ՅՕԴ. 3 – Միութիւնս իր նպատակները իրադրութեւրու համար պիտի ջանայ՝

ա. քաղաքիս մէջ ունենալ սեփական ակումբ մը՝ իր գրադարան – ընթերցարանով:

բ. իր նպատակները հետապնդող կանանց, երիտասարդաց եւ պատանեկան օժանդակ մասնախումբերու հիմնում ու հովանաւորում:

գ. Այնթապի հայ – պատմութեան եւ ազգագրութեան նուիրուած արժէքաւոր հրատարակութիւններու քաջալերում:

դ. Այնթապցիներու զաւակներուն կրթութեան համար հիմնել անդուշտ մէջ դպրոց մը, կամ անուուազն, հայերէն լեզուի ուսուցման միջոցներ ստեղծել:

ե. Միութեան անդամներուն ամէն կերպ բարոյական աջակցութիւն ընծայել:

զ. Գործակցել նոյնանպատակ բոլոր հաստատութիւններուն ու միութիւններուն:

ԳԼՈՒԽ Գ.

ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ՅՕԴ. 4 – Հիմնել դրամական ֆօնտ մը:

ՅՕԴ. 5 – Դրամական ֆօնտը պիտի կազմուի՝

ա. Անդամական վճարումներէ: բ. իր, կամ իր օժանդակ մասնախումբերու կողմէն սարքուած խրնձոյքներու, հանդէսներու, երեկոյթներու, ցերեկոյթներու, ներխայտումներու եւ պաշարներու հասոյթներէ:

- դ. Բացառիկ նուիրատուութիւններէ:
 դ. Կատարուած հանդանակութիւններէ:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 6 - Միութեանս գործօն անդամ կը նկատուին՝

ա. Այն ամէն այնթաղցի հայրենակիցներ և անոնց սեռի, զաւանանքի, յարանուանական եւ կուսակցական խտրութեան - որ Միութեանս նպատակն ու գործունէութիւնը ճշգոյ այս ծրագիր - Կանոնադիրը կ'որլկզրեն եւ կը յարզեն:

բ. կը վճարեն իբր մուտք մէկ փեսօ եւ իբր անդամովձար տարեկան առնուազն այրերը՝ 12 փեսօ իսկ կանայք եւ (միշեւ 17 տարիքը չլրացուցած) պատանիները 6 փեսօ զումարը:

դ. Չբխովձար անգամները:

Ծանօթ. - Նիւթապէս անկարող անգամներու վճարումները միայն Արչութեան որոշումով կրնան առկախուիլ կամ ջնջուիլ:

դ. Պատուոյ Նախագահները

ե. " Անգամները

Ծանօթ. 1 - Ընդհ. ժողովի որոշումով եւ մասնաւոր գրութեամբ ՊԸՏԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ տիտղոսը կը տրուի այն ամէն հայու որ միութեանս խոշոր նուիրատուութիւն մը (առնուազն 1000 փեսօ) կ'ընէ կամ արժէքաւոր ծառայութիւն մը կը մատուցանէ:

Ծանօթ. 2 Նոյն եղանակով ՊԸՏԻՈՅ ԱՆԴԱՄ տիտղոսը կը տրուի անոր, որ միանուագ 200 եւ ամսական 10 փեսօ անգամավճար կը վճարէ:

ԳԼՈՒԽ Ե

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 7 - Կեդրոնական Վարչութիւնը կը կազմուի Տինգ անձերէ, եւ կը վարէ միութեանս ընդհանուր գործերը այս կանոնագրի տրամադրութեանց եւ պատգամաւորական ժողովի որոշմանց համաձայն:

ՅՕԴ. 8 - Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Պատգամաւորական Ժողովին կողմէն՝ մեծամասնութեան քուէով:

ՅՕԴ. 9 - Կեդրոնական Վարչութեան պարտաւորութիւններն են -

ա. Միջոցներ ձեռք առնել նոր մասնաճիւղեր կազմելու, կազմուածները զօրացնելու. եւ զանոնք գործունէսց վիճակի մէջ պահելու համար:

բ. Հսկել Միութեան մասնաճիւղերու հաշուական գործերուն կանոնաւորութեան, հաստատելով հաշուապահական միօրինակ դրութիւն:

գ. Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է առնուազն վեց ամիսն անդամ մը՝ մասնաճիւղերուն տեղեկագրով հաղորդել իր գործունէութիւնը, եւ պատրաստել տարեկան մանրամասն տեղեկագիր մը իր եւ մասնաճիւղերու գործերուն եւ հաշիւներուն մասին, ու ներկայացնել այդ տարեկան տեղեկագիրը պատգամաւորական ժողովին: Նաեւ պատրաստել պիւտձէ՝ յառաջիկայ տարեշրջանի՝ համար. եւ ներկայացնել Պատգամաւորական ժողովին վաւերացման:

ՅՕԴ. 10 - Կեղրոնսական Վարչու թիւնը առնուազն ամիսն անգամ մը նշտտ ունենալու է Միութեանս յառաջացման միջոցներու վրայ խորհելու եւ զործերը կանոնաւ որ կերպով վարելու համար:

ՅՕԴ. 11 - Կեղրոնսական Վարչու թիւնը պարտաւ որ է ամէն վեց ամիսն անգամ մը ընդհ. համարատուութիւն ընել զրաւ որ կերպով եւ զայն հաղորդել մասնաճիւղերուն:

ՅՕԴ. 12 Կեղր. Վարչու թիւնը հաւաքաբար պատասխանատու է պատգամաւորական ժողովին՝ իր բոլոր գործառնութեանց համար:

ՅՕԴ. 13 Կեղր. Վարչու թեան անդամներէն որեւէ մէկը երբ կ'ուզէ հրաժարիլ իր պատճառաբանեալ հրաժարականը ներկայացնելու է զրաւ որ կերպով Վարչ. Ատենագետին:

ՅՕԴ. 14 Կեղր. Վարչու թեան պաշտօնը կը տեւէ երկու տարի, բայց առաջին տարուան վերջը՝ երկու քը, եւ երկրորդ տարուան վերջն՝ ալ միւս երեք անդամները կը փոխուին: Առաջին տարուան փոփոխութիւնը վիճակով պիտի ըլլայ: Կեղր. Վարչու թեան անդամները վերընտրելի են:

ԳԼՈՒԽ Զ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԻՐ

ՅՕԴ. 15 Ուր որ 7. կամ աւելի աշխատացի հայեր կան, մասնաճիւղ մը կրնան կազմել:

ՅՕԴ. 16 - Ամէն մասնաճիւղ իր անդամներով կը կազմէ մասնաճիւղին լ'նդհ. կամ Անդամական ժո-

ղովը՝ որ առնուազն տարեկան 4 անգամ նխտ պէտք է գու՛մարէ:

ՅՕԴ. 17 - Մասնաճիւղի մը գործերը կը վարէ ընդհ. Ժողովէն ընտրուած վարչութիւն մը՝ 3 - 5 անդամներով, որ գործերը կը ձեւէ ու կը յարմարցընէ այս ծրագիր - Կանոնադրին մէջ՝ Կեդրոնական Վարչութեան պաշտօնն ու պարտաւորութիւնները ձշող յօդուածներու տրամադրութեանց եւ այս վերջինիս տուած ուղղութեան համաձայն:

ՅՕԴ. 18 - Մասնաճիւղերու Վարչութիւնները պէտք է վաւերացուին Կեդր. Վարչութեան կողմէ:

ՅՕԴ. 19 - Մասնաճիւղերը պարտաւոր են անդամական տուրքերուն եւ այլ եկամուտներուն ամբողջ հասոյթը Կեդր. Վարչութեան ղրկել՝ իրենց քով պահելով տասնեւհինգ առ հարիւրը տեղական ծախքերուն համար (եթէ համանուն քաղաքին մէջ չեն գտնուիր):

ՅՕԴ. 20 - Այն մասնաճիւղերը, որոնց անդամներուն թիւը հինգէ վար կ'իջնէ. պարտաւոր են իրենց քովի՝ Միութեան պատկանող գոյքերը, դրամ, տոմարներ. կնիք, նամակ եւ այլն ամբողջութեամբ Կեդր. Վարչութեան յանձնել եւ մօտակայ մասնաճիւղի մը անդամակցիլ: Իսկ եթէ իրենց մօտ մասնաճիւղ գոյութիւն չունի, իրենց յարաբերութիւնը կրնան պահել ուղղակի Կեդր. վարչութեան հետ:

ԳՂՌԻԽ Է.

ՊԱՏԴԱՍԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 21 - Միութեանս մասնաճիւղերը՝ հաւաքաբար, իրենց ներկայացուցիչներով կը կազմեն Միութեան Պատգամաւորական Ժողովը:

ՅՕԴ. 22 - Խւրաքանչիւր մասնաճիւղ, որ մինչեւ քսան անգամ կը պարունակէ՝ մէկ ձայն, եւ քսանէն վեր խւրաքանչիւր քսան անգամի համար մէկ ձայն ունենալ պատգամաւորական ժողովի մէջ:

ՅՕԴ. 23 - Մասնաճիւղեր որպէսզի իրաւունք ունենան իրենց պատգամաւորները զրկելու պատգամաւորական ժողովին. պէտք է որ իրենց տարեկան հաշիւները մաքրած եւ զրկած ըլլան կեդրոնական վարչութեան, Պատգամաւորական ժողովին նիստի օրէն մէկ ամիս առաջ:

ՅՕԴ. 24 - Պատկամաւորական ժողովը ամէն անգամ ինքն իր մէջէն կը ընտրէ իր ղեւանը:

ՅՕԴ. 25 - Պատգամաւորական ժողովին նիստը եւ օրակարգը, դու մարման թուականէն առնուազն երկու ամիս առաջ պէտք է հաղորդուի բոլոր մասնաճիւղերուն՝ կեդր. վարչութեան կողմէ:

ՅՕԴ. 26 - Այն մասնաճիւղերը, որոնք հեռաւորութեան պատճառաւ անկարող են ուղղակի պատգամաւորներ զրկել, կրնան իրենց օրինական ձայները տալ, միութեանս անդամներէն կեդրոնի մօտ գտնուող անձերուն:

ՅՕԴ. 27 - Ուեւէ պատգամաւոր, բացի իր մասնաճիւղի ձայնէն, փոխանորդաբար ուրիշ մասնաճիւղերուն կողմէ երկու քէն աւելի ձայն չի կրնար ունենալ, այսինքն կրնայ առ առաւելն երեք ձայն ներկայացնել:

ՅՕԴ. 28 - Պատ. ժողովին իրաւասութիւնն է -
Ա. ընտրել Միութեան կեդր. վարչութիւնը:

Բ. Կարգադրել այն բոլոր խնդիրները, որոնք կը ներկայացուին կեդրոնական վարչութեան եւ մասնաճիւղերուն կողմէ:

Գ. Բննել եւ վաւերացնել կեդրոնական վարչութեան տեղեկագիրը եւ երևմտից հաշիւները:

Դ. Սահմանել Միութեան տարեկան պիւտձէն:

Ե. Գծել Միութեան յառաջիկայ շրջանին գործունէութեան ուղղութիւնն եւ այլն:

ԳԼՈՒԽ Ը.

ԸՆԴՀ. ԿԱՆՈՆՆԻՐ

ՅՕԴ. 29 - Միութեան գրամները պիտի պահուին Պուէնտս Այրէսի ապահով գրամատան մը մէջ:

ՅՕԴ. 30 - Միութեան նպատակին հետ կապուած բոլոր գրամական գործառնութիւնները պիտի կատարուին կեդրոնական վարչութեան միջոցաւ:

ՅՕԴ. 31 - Դրամատունէն գրամ պիտի հանուի կեդրոնական վարչութեան գրաւոր որոշմամբ, ատենապետին եւ զանձապահին ստորագրութեամբ, եւ միայն՝ չէքով, իսկ չէքերն ու ստացագրերը (resibos) զանձապահին կողմէ պէտք է պահուին խնամքով:

ՅՕԴ. 32 Կեդրոնական վարչութեան զանձապահը ամէն ամիս պարտաւոր է գանձին հաշիւը ներկայացնել վարչութեան՝ գրաւորապէս:

ՅՕԴ. 33 Կեդրոնական վարչութիւնը իր ծախքերուն համար կրնայ ծախսել տարեկան անդամական տուրքերէ զոյացած եկամուտին առ առաւելին տասնը հինգ առ հարիւր:

ՅՕԴ. 34 - Միութեան - իր բոլոր մասնաճիւղերն

այ միասին հաշուած - ընդհ. եկամուտը պիտի գործածուի հետեւեալ եղանակով

1 քառասուն առ հարիւրը միշտ հիմնադրամին վրան պիտի աւելցուի

2 Երեսուն առ հարիւրը պիտի յատկացուի արտասահմանի կարօտութիւններուն:

3 Տասնըհինգ առ հարիւրը տեղական կարօտութիւններուն:

4 Տասնըհինգ առ հարիւրը ընդհանուր ծախսերուն:

ՅՕԴ. 35 Ըլլայ անդամատուրքերուն, ըլլայ նուիրատուութիւններուն եւայլն վճարումին համար, պիտի տրուի ստացագիր, ստորագրուած դանձապահէն ինչ կնքուած միութեանս պաշտօնական կնիքով:

ՅՕԴ. 36 - Որեւ է անդամ երբ միութենէ հրաժարի, կամ պատգամաւորական ժողովի կողմէ պարտապարտի քաշուիլ ոչ մէկ նիւթական հատուցում կամ բաժին չկրնար պահանջել միութենէն:

ՅՕԴ. 37 Միութեան ներքին անհամաձայնութիւններու կամ զեղծումներու քննութեան համար կազմուած դատաստանական յանձնախումբին տուած որոշումը պարտապիւր է երկու կողմին համար ար:

ՅՕԴ. 38 - Կեդրոնական վարչութիւնը ստիպողական պարագաներու ներքեւ պիտի կրնայ միութեան հիմնադրամէն փոխառութիւն ընել:

ՅՕԴ. 39 - Միութեան ժողովներուն որեւ է նիստը օրինաւոր նկատուելու համար անդամներու մեծամասնութեան ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՅՕԴ. 40 - Ընթացիկ օրակարգով ժողովները երկրորդ հրուէրին պատասխանողները մեծամասնու-


Թիւն համարելով կրնան տեղի ունենալ եւ օրինա-
նաւոր համարուել:


ՅՄԴ. 41 - Ներկայ հիմնական կանոնադիրը կրնայ
փոխուել պատգամաւորական ժողովի մէջ միայն, եւ
ներկայ զանուող պատգամաւորներու մեծամասնու-
թեան ձայնով: Կանոնադրի բարեփոխման համար ե-
ղած որեւէ առաջարկ պէտք է զբաւոր ըլլայ եւ
յանձնուի կեդրոնական վարչութեան՝ պատգամաւո-
րական ժողովի զումարումէն առաջ:

ԳԼՈՒԽ Թ.

ԿԱԶՄԱԼՈՒԹՅՈՒՄ

ՅՕԴ. 42 - Երբ մրութիւնը հինգէն պակաս անդամ
ունենայ, լուծեալ պիտի հռչակուի. եւ իր գոյքերն
ու դրամները պիտի յանձնուին. միացեալ նահանգ-
ներու Ամերիկաբնակ Այնթապցիներու հայրենակ-
ցական միութեան, եթէ կայ եւ կը գործէ. հա-
կառակ պարագային Հ. Բ. Ը. Միութեան՝ միութեանս
նպատակներունս գործածուելու համար:





195

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0321314